

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՄԵՐՈՍԻ «ԻԼԻԱԿԱՆ»-Ի ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետաքրքրությունը Հոմերոսի նկատմամբ տարբեր ժողովուրդների մոտ զալիս է հնուց. «Իլիականում» և «Ոդիսականում» արծարծած խնդիրների բաղաձայնությունը, կերպարների խորությունը ու գունազեղությունը միշտ էլ զբաղեցնում են շատ խոշոր գիտնականների, բանասերների և այլոց ուշադրությունը: Իսկ հոմերոսյան բնագիրը կարգավոր բաղաձայնությամբ փորձերից, շատ փորձեր են կատարվել նաև թարգմանելու այն:

Հայ իրականությունը մեջ «Իլիականը»-ը թարգմանել են 19-րդ դարում. հայտնի են Թովմաճանի (1843 թ. Վենետիկ), Բաղրատունու (1864 թ. և 1893 թ. Վենետիկ) և Ղադիկյանի (1911 թ. Վենետիկ) թարգմանությունները: Վերջերս՝ 1955 թ. Հայպետհրատը լույս ընծայեց Համոզասյ Համարձույնի բնագրից կատարված թարգմանությունը, որն արժեքավոր աշխատանք է, ուշադրաբար բաղաձայնությամբ տեսակետներից:

Թարգմանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թարգմանիչը ըմբռնել է Հոմերոսի արվեստի ուժը, ապրել է ու շնչել նրա հերոսների հետ, թափանցել նրանց մտածողության, կենցաղի ու սովորությունների մեջ:

Ինչպես հայտնի է, էպիկական ստեղծագործության ոճական առանձնահատկություններն են նրա էպիկական կրկնությունները, համեմատությունները, էպիտետները, պաթետիկան և վերամբարձ ոճը: Պոեմում մեծ հետաքրքրություն են ներկայացնում համեմատությունները, որոնք պատկերը կամ գործողությունը դարձնում են գունեղ, լեզուն՝ հարուստ: Համարձույնը հարադատ է մնացել Հոմերոսի էպիկայի արտահայտչական միջոցներին: Դրանում համոզվելու համար կարելի է բերել մի շարք օրինակներ:

Ինչպես ասողերը երկնքում, պերճ խմբերով լուսնի շուրջը
Շողողում են սքանչաբար, երբ խաղաղ է եթերը վառ.
Երբ դառնում է տեսանելի շուրջն ամեն ինչ,—անտառ ու լեռ,
Հովիտ ու դաշտ,—և եթերն է բացված անհուն, անծայրածիր,
Երևում են աստղերն ամեն և հովիտն է խնդում սրտանց,—
Այդպես ահա վառված էին տրոիդացոց բյուր կրակներն
(Երգ 8-րդ, տող 552—558)

Կամ՝ Ինչպես երկու հարևաններ՝ երկու արտի միջև կանգնած՝
Վիճում են թունդ, իրանց ձեռքին բռնած չափանն արտավարի,
Եվ գողգոթում են հավասար հողամասի չափի մասին,—
Այդպես նրանք մարտկոցներով լոկ բաժանված միմյանց կրծքի
Ջարդում էին լայն, կաշվեպատ և բոլորակ վահաններ.....
(Երգ 12-րդ, տող 421—424)

Ինչպես ականջատ կերպով երևում է վերը մեջբերված հատվածներից Համոզասյ Համարձույնի թարգմանության մեջ հոմերոսյան համեմատությունները բերված են այնպիսի հարադատությամբ, որ արտահայտում են անմահ բանաստեղծի համեմատությունների իսկական, կետային ֆունկցիան: Մի հանգամանք, որ բնորոշ է այս թարգմանության համար:

Լեզվի մաքրության և բարձրորակ թարգմանության ուսանելի օրինակներ են առաջին երգի 1—30 տողերը, 14-րդ երգի 150—290 տողերը և այլն: Ահա օրինակ, 4-րդ երգի 116—126 տողերը:

Եվ Պանդարոսն իր կապարճի խուփը վերցրեց, նրա միջից
 Թևասլաց մի նետ հանեց— դաժան պատճառն աղետների,
 Ապա զրեց պրկած լարին իսկույն նետը իր դառնախնային.
 Գարձավ, ու խոնց աղեղնավոր և լուսածին Ասլուլունին—
 Նվիրական զոհ մատուցել գեր, անդրանիկ զառնուկներին,
 Երբ որ կրկին ետ դառնա տուն, Ջելյա քաղաքն իր սրբազան.
 Հետո քաջեց մի անգամից զղղուկն ու լարը եղնաջիլ,
 Ջիլը հասցրեց նրա սպուկին, երկաթ սլաքը աղեղին:

Սրանք այն տողերն են, որոնք հիշատակում է Հեսսինզը «Հանկոոն»-ում՝ որպես
 հոմերոսյան դեղարվեստական նկարագրության օրինակ:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ թարգմանությունը կատարված է ընա-
 գրի բարձր ոճին համապատասխան, պահպանված են բառապատկերները և ութմական ամ-
 բողջությունը: Որքան Թովմաճանը և Ղազիկյանը ազատ են զգացել իրենց թարգմանու-
 թյան մեջ, դուրս են գցել կամ ավելացրել բառեր, այնքան համարձույնը հարազատ
 է ընագրին, ձգտում է ոչ միայն բառերի ճշգրիտ, այլև գեղարվեստորեն բարձր ու ար-
 տահայտիչ ձևերի:

Հոմերոսի կիրառած փոխաբերություններն ու մետաֆորիկ արտահայտությունները
 համարյա միշտ ծայրահեղ են, հիպերբոլիկ— չափազանցված. փոխաբերու-
 թյանցով բանաստեղծը դիպուկ ընդունում է ոչ միայն նկարագրի իրադրու-
 թյանները, զործողություններն ու ընկալությունը, այլև նրանց պատկանող իրերն ու
 նույնիսկ զաղափարները:

Այսպիսի հատվածները թարգմանության մեջ վերարտադրված են իրենց ամբողջու-
 թյամբ և զուենազեղությամբ.

Պատրոկլոսը եկավ, կանդնեց դեմն Արիլիս ազգապետի,
 Թափելով հորդ ու ջերմ արցունք ինչպես աղբյուր մի սևաջուր
 Որ բարձրաբերձ ժայռի զլսից ցած է նետում մութ հոսանքներ:
 (Երգ 16-րդ, տող 3—4)

կամ՝

Նախ և առաջ տեսական մի հեղուկով լվաց—մարեց
 Իր մարմինը կեղտ ու փոշուց, ապա օծեց անուշաբույր,
 Ամբրոսային քաղցր յուղով, որ տանը միշտ պահած ունենր.—
 Բավական էր այն ցնցեին, և պղնձյա տունը Ջեսի,
 Երկինք երկիր կլցվեին իսկույն բույրով աստվածային:
 (Երգ 14-րդ, 170—174 տողեր):

Թարգմանության մեջ լրիվ կերպով պահպանված են նաև ընագրի կրկնություն-
 ները: Ոճական տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում էպիտետները:

Էպիտետները թարգմանության հարցում երևան է զալիս թարգմանչի պատմական
 մոտեցումը, հայերենին կատարելապես տիրապետելու հանգամանքը: Էպիտետների թարգ-
 մանության չգերադանցված օրինակներ են՝ Հոմեր—Χρυσόθρονος= ոսկեգահ կամ ոսկեգա-
 հիկ, λευκωλενος = լուսաթևիկ, մինչդեռ Թովմաճանի մոտ «սրաթև» է զարձել, λευκος ոչ
 թե սուր է նշանակում այլ փայլուն, լուսավոր, ուստի պետք է լինեի ոչ թե «սրաթև» այլ
 լուսաթև», χρυσόγυιος կամ χρυσόγυιος համարձույնը թարգմանում է «թխամազ» կամ
 «սևամազիկ», մինչդեռ Թովմաճանի մոտ «ծիրանավարս» է, որը ոչ մի ընդհանուր բան
 չունի քննարկի հետ:

Էպիտետների թարգմանության ընթացքում էական է արխայիկ՝ զրարար բառերի
 օգտագործումը, որը կատարվում է երկու նպատակով. աղեքվատ թարգմանության հա-
 մար և երկրորդ, որ այդ բառերը (ստեղծագործությանը համապատասխան) ստեղծում են
 բարձր ոճ ու հանդիսավորություն, օրինակ՝ χρυσόστομος—կորդակաճճ «ծուզ»—«աստվածա-
 դան»: Ահա մի շարք էպիտետներ համարձույնի թարգմանությամբ. «արագավազ, գե-
 րամեծար, նենգամիտ, ոսկեգահիկ, ամպահալած, մարտատենչ, ամպահույզ, մարդակոտոր,
 արագաշյա» և այլն:

Համբարձումյանի թարգմանությունը գերծ է նաև առանձին բառերի, հասկացողությունների ավելորդ պարզարանումներից և հավելումներից. օրինակ՝ Գնեդիչ՝

Слезы у них, у печальных, слёзы горючие
С веждей на черную капали землю.

(Ծրգ 17-րդ, տող 437)

Համբարձումյան՝

Դառնակակիծ հորդ արտասուքը աչքերից նրանց տխուր,
Ջերմ թափվում էր դետնի վրա.....

Գնեդիչի մոտ ընդգծված բառերը ավելացված են և հակառակ պոեմի ոգուն ստեղծում են սենտիմենտալ տրամադրություն:

Համբարձումյանի թարգմանության մեջ ևս երբեմն նկատվում է ընդարձակ թարգմանություն (այսինքն մեկ որոշիչ բառը երկու կամ երեք բառերով արտահայտված), սակայն այն ղեպդում, երբ բնագրի համազորը չկա թարգմանվող լեզվի մեջ. այսպես՝ Ծրգ 1, տող 66:

Բացի վերոհիշյալ, էպիկական ոճին յուրահատուկ պայմաններից, հոմերոսյան բնագիրը բնութագրվում է նաև, այսպես կոչված «շեղումներով» (retardatio), և ապա ժամանակագրական անհամատեղելիության օրենքի կիրառումով: Առաջին ղեպդում մեծ բանաստեղծը, իր թեմատիկ դժից շեղվելով, նորանոր ղեպքեր ու պատմվածքներ է ներմուծում վիպերգության մեջ. երկրորդ ղեպդում — միաժամանակ կատարված իրադարձությունները պատմում է ոչ թե զուգահեռ կերպով, այլ պատմվածքը զարգացնում է հերթական գծով, միաժամ կատարված ղեպքերը դարձնելով հաջորդական:

Գնահատելի է, որ Հ. Համբարձումյանը կարողացել է իր թարգմանությամբ բնագրին համապատասխան ճշգրտորեն կիրառել դրանք:

Այս ամենի հետ պետք է նշել նաև մի քանի թերություններ, որոնք անխուսափելի են թարգմանական նման ծանր աշխատանքի համար: Այս մասնակի թերություններից պետք է համարել որոշ էպիտետների ոչ ճիշտ վերադարձություններ. օրինակ՝ *ῥιτοειδὲς* նշանակում է աստվածներից սնված և ոչ աստվածակերպ՝ ինչպես թարգմանել է Համբարձումյանը: Անհրաժեշտ է նշել մի այլ թերություն ևս՝ դա վերաբերում է 22-րդ գլխի 125—129 տողերին, որոնց սխալ թարգմանության հետևանքով տուժել է ոչ միայն ղեպդավետական ձևը, այլև ազավազվել է հատվածի իմաստային նշանակությունը:

Հին հույների մոտ եղել է ավանդություն, ըստ որի իրենք առաջացել են կաղնուց և քարից, և երբ վերոհիշյալ տողերում ասվում է՝

Οὐ μὲν πῶς νοῦν ἔστιν ἀπὸ θρύος οὐδ' ἀπὸ πέτρης
τῷ ὀαριξέμεναι, αὖτε παρθενος ἡιδεός τε

(Ծրգ 22-րդ, 125—129 տող)

այդ նշանակում է ոչ թե՝

«Ժամանակ չէ որ միմյանց հետ մենք զրույցներ անենք հիմա,
Ինչպես խոսում են կաղնու տակ կամ քարերի վրա նստած
Ծրիտասարգն ու ղեղջկուհին».....

(Համբարձումյան, Ծրգ 22-րդ, տող 125—129)

այլ՝

«Հարկավոր չէ խոսել, սկսելով կաղնուց և քարից»..... Ինչպես ժողովուրդն է ասում
«Հարկավոր չէ սկսել Ադամից և Եվայից»:

Աշխատանքում տեղ են գտել որոշ ազավազումներ՝ օրինակ՝ ա) 4-րդ երգի երկրորդ տողում ասված է «մեկ տեղ բազմած խորհում էին, իսկ մեծարգո Հերան նրանց մատուցում էր ոսկյա թասով նեկտարն ափուլ» սա սխալ է. Հերան, Ուլիսիական կաճառի «ոսկեգահ» թագուհին՝ չէր կարող ստանձնել մատուցողի, մատուկի պաշտոնը: Այդ պաշտոնը կատարում էր հատուկ մատուկող, որի անունն էր Հերեի Պարզ է, որ Հերայի փոխարեն պետք է լիներ Հերեի բ) 6-րդ երգի 12—13 տողերում ասված է՝ «Իսկ Դիոմեդն ահեղագող դարկեց—զցեց թևթրասածին Աբելլեսին» սա սխալ է. նախ՝ Աբելլեսը Խեթրասի որդին չէր, այլ թեսալական Պելիս թագավորի որդին:

Երկրորդ՝ Դիոմեդը չէր կարող 6-րդ երգի մեջ «զարկել» Աքիլլեսին, որովհետև այդ ժամանակ վերջինս կռվի մեջ չէր գտնվում: Այդտեղ Դիոմեդը զարկում է Աքսիլոսին և ոչ Աքիլլեսին: Վերոհիշյալ տողում Աքիլլեսի փոխարեն պետք է լիներ «Աքսիլոս»: Գ) Բանբեր Իդևոսը 7-րդ գլ. 276 տողի մեջ դարձել է «Իդևսոն»: Այսօրինակ թյուրիմացություններ գրքում շատ կան:

Ամփոփենք: Հոմերոսյան վիպերգության տվյալ թարգմանության ընդհանուր արժանիքն այն է, որ լնագրի մտքերի լիակատար վերարտադրությունը ամենայն հարադատությամբ է տրված, պահպանելով պատմականությունը և հեղինակի մտածողությունը: Հարազատորեն են արտահայտված պոեմի ոգին, հանդիսավորությունն ու էպիկական ոճը:

Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս. ՇՏԻԿՅԱՆ

